# Պոլյանիչկոն Մոսկվայից պահանջում է նոր պատժիչ գործողություններ

Հադրութի շրջանի Տող գյուղում տեղակայված ադրբեջանական շինարարական ջոկատի անդամներից մեկը ոչ սթափ վիճակում հայտարարել է, թե հունիսի 16-ին նախատեսվում է Տող գյուղի հայ բնակչության տեղահանում, որին կօգնեն մեկ օր առաջ այստեղ ժամանելիք ադրբեջանական ՕՄՈՆ-ի ջոկատները:

Հունիսի 15-ին մարզի տարածքում տեղակայված զորքերը կլքեն մարզը: Նրանց կփոխարինեն նոր զորամիավորումներ:

Ադրբեջանի հանրապետության ներքին գործոց նախարար Ասադովը դիմել է Շատալինին Շահումյանի շրջանի տարածքում գտնվող ներքին զորքերը հանելու պահանջով: Վերջինս հասկացրել է, որ նման դեպքում կհանեն նաեւ ԼՂԻՄ-ի տարածքում տեղակայված զորքերը:

Պոլյանիչկոն իր հերթին դիմել է Մոսկվա, թե ո՞ւմ, դեռեւս տեղեկություն չունենք, եւ պահանջել ընթացք տալ «Կոլցո» օպերացիային եւ գործողություններն սկսել Շահումյանի եւ Մարտակերտի շրջաններում, ուր, ըստ նրա դեռեւս չարունակում են բուն դնել հայ մարտիկները:

Ըստ վերջին տեղեկությունների, Խծաբերդում եւ Հին Թաղլարում զինվորական հըսկիչ կետեր են տեղադրվել 30-ական զինվորներով:

Տեղեկություններ են ստացվել, որ Հադրութում տեղակայվել է 200 հոգուց բաղկացած խորհրդային հատուկ նշանակության ջոկատ:

սեփ. թղթ.